

216

Գրք
Որ ~~1907~~
11.6.19

Խաղան «Կ Ե Ա Ն Ք Ի» N 11

Ե Ր Գ Ե Ր

Թարգմ. ԴԱԻԻԹ ՆՈՐԵԿ

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

ԸՍԵՒՈՒ

Տպարան Ն. Երևանցիանի

1907

8
Ն-77

11 MAY 2005

№ 11 Գրադարան «ԿԵԱՆՔԻ» № 11

Արմ.	
2-5703a	2-5703a

001 2008

204

8
 6-77

Ե Ր Գ Ե Ր

Թարգմ. ԴԱԽԻԹ ՆՈՐԵԿ

ՀԿԵ. № 22681

ԲԱՆՈՒ
 Տպարան Ն. Երևանցեանի
 1907

(Մի մասը արտատպւած է «Կեանքից», «Ձայնից» և «Բանտորից»):



39923-63

* * *

(Ուստ Ուխտման)

Ո՛չ սգւոր, յոգնած, պաղ մարտիկներին՝
Խիստ կորուստներից արդէն ուժասպառ,
Այլ խիզախ, մատաղ, վեհ հոգիներին
Երգս եմ յղում արդ ոգեպարար:
Թող մեռելները բերեն իրար սէր
Ու լան վշտալից շիրիմների մօտ՝
Մենք կենդանի ենք. ալ արիւնը մեր
Կուսական խանդով եռում է տենդոտ:
Սուրբ յիշատակը ընկած քաջերի
Մենք պահպանում ենք անվիշտ ու անլաց,
Մենք պապակում ենք և ոյժ և հոգի
Նորից սեղանին դնել այն փառաց:
Զգել է մէկը սղոց ու կռան՝
Մենք սլանում ենք բանել փոխարէն
Եւ այն պալատը մեծ, ժողովրդեան
Ընկած սալերից կերտելու նորէն:
Ո՛ւմ պղտոր հայեացք ձգած է դետնին,
Մենք խորաթափանց նայում ենք յառաջ.
Յամառ ձգտում ենք մէջ մթնաշաղկին
Տեսնել հեռուոր այգը ու ճաճանջ:
Անցիր, իմ երգս, կոչնակ խանդավառ,
Հեռո՛ւ, անհամբաւ ծայրեր ու սահման.
Կեցցէ՛ մատաղ կեանք, աղբիւրը կայտառ
Վեհ ձգտումների, գործի սրբադան:

Անցիր, իմ երգս, թո՛ւր դէպ եթեր,
 Որպէս արծիւը ազատ, անկապանք.
 Կեցցէ հանճարը այն հրաշաբեր, —
 Ստեղծագործող, հզօր աշխատանք:
 Անցիր, իմ երգս, նորից ու դարձեալ,
 Որոտայ, ինչպէս շանթալից շեփոր.
 Կեցցէ մեր կեանքի մայրը տիրակալ, —
 Իշխան աշխարհի—պայքարը հզօր:
 Ծայրից մինչև ծայր հայրենի երկրի
 Մենք միմիանց ողջոյն յղում ենք սիրով...
 Մենք ծիծառներ ենք գարնան օրերի,
 Մեզ հետապնդող դալար կանաչով:
 Թող շղթայած է սառցով խուլ գետին
 Եւ կարկաշահոս ամեն-մի վտակ,
 Մեռած է տերև, ձիւնը դաշտերին
 Արծաթ սաւանով պռուկել է արձակ՝
 Արդէն հնչել է որոտի հարուած
 Անյայտ, լեռնային, վէս բարձունքներից.
 Յընցւել է ոյժը երկար հմայած
 Եւ տատանւում է լուծը ծանրալից:
 Լուսին է դիմում ջերմաբոյր քամի
 Ու խաւարի մէջ, ամեն-մի քայլում
 Արդէն աղբիւրներ անտես ու գաղտնի
 Փորում են ձիւնը յամառ, անդադրում:
 Թող կորչի մութը, կեցցեն լոյս ու օր,
 Նոր ժամանակի տալիս ենք համբաւ.
 Մատաղ գարունն է գուարթ, խնկաբոյր
 Բիւր դրօշներով գալիս սրարշաւ:

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ

(Ն. Ն.)

Ձեր պերճութիւնը, գանձը ու ոսկին,
 Ձեր խորտիկները, հանգիստ ու զիպակ,—
 Դուք պարտական էք մեր յորդ քրտինքին
 Եւ մեր կարիքին սև ու դժնդակ:
 Նայեցէք ապա թաղերին դժգոյն.
 Մար-գործարաններ ցըցւած են հպարտ՝
 Բիւրլուսամտեան, կեղտոտ, մռայլուն,
 Միշտ հառաչում են, մխում անընդհատ:
 Այնտեղ-դժողքում-աշխատանքի մէջ
 Մարդն է գալարւում, տանջւում օրնիբուն...
 Բիւրաւոր ձեռքեր գերի են անվերջ,
 Հաց են վաստակում—քրտինք ու արիւն:
 Ձեր պերճութիւնը, գանձը ու ոսկին,
 Ձեր անգորր կեանքը՝ լի ու փառաշուք
 Դուք պարտական էք մեր ծանր մուրճին,
 Մեր յոգնածութեան ու բազկին բանուկ:
 Նայէք, կեղտի մէջ, խոնաւ գետնի տակ,
 Մութ մառաններում՝ մոռացւած ու խոր,
 Մի հոծ բազմութիւն մերկ, բորիկ, անանկ,
 Կարձում է դարը իր աշխատաւոր:
 Զարկում են, կռում այնտեղ օրնիբուն
 Կորացած շտապ, սև գործի վրայ...
 Մի հոգսով դաժան տարւած յարաճուն՝
 Մարդը դազգեանին դարձել է ծառայ:

Ձեր պերճութիւնը, գանձը ու ոսկին,
 Ձեր գուարճ կեանքը, լիառատ սեղան,—
 Դուք պարտական էք մեր յորդ քրտինքին,
 Մեր աշխատանքին—գառն ու դաժան:
 Ահ, անհոգներդ, նայեցէք դուք մէկ,
 Ինչպէս կորացած, ձողը ձեռքերին,
 Գործում, փորում են մարդիկ վշտաբեկ
 Խորը հանքերում, խոնաւ ու մթին:
 Խաւարն ու հանքը— ինչպէս մի դազադ—
 Սեղմում են մարդու կուրծքը շարունակ,
 Անօդ և անյայտ ու միշտ մտազբայ
 Մարդիկ թօշնում են, մեռնում գետնի տակ:
 Ձեր պերճութիւնը, գանձը ու ոսկին,
 Ձեր փափուկ կեանքը, ոյժը ու կշիռ,
 Դուք պարտական էք լուկ մեր սապատին,
 Մեր կարիքներին անգութ, շղթակիր:
 Ո՞վ է սարերը քերել անխնայ,
 Անանցանելի կոտորել անտառ,
 Գցել ուղիներ, կամուրջներ հսկայ
 Անապատներով, գետերով վարար:
 Ո՞վ է ովկիանի ոյժը վիթխարի
 Յաղթել անարկու, բիրտ աշխատանքով
 Եւ յորձանքները գոռ ու վայրենի
 Նուաճել մարդուն; սաստել իր բազկով...
 Բնութեան շեշտած ամեն հրաման,
 Ձեր ոյժը հանդիստ ու յաջողութիւն,
 Դուք պարտական էք մեր քաղցին, արեան,
 Մեր յորդ քրտինքին ու վշտին անհուն:

Ո՞վ է ստեղծում անդուլ ջանքերով
 Եւ չքեղ տաճար, և հպարտ դղեակ,
 Ո՞վ է երկնքին մեկնում իր ոյժով
 Հրաշակերտած քարաշէն քաղաք:
 Ո՞վ է իր ջանքով հանել երևան
 Ձեր ապրանքների կոյտերն անհամար, —
 Մենք նոցա վրայ քրտնել ենք այնքան,
 Դուք մեզնից ոյժով կորզել էք իսպառ...
 Ե՛լ, բոբիկ, տնանկ, խեղճ աշխատաւոր,
 Թողիր ներքնայարկ ու խոնաւ մառան.
 Ե՛լ, դու վշտաբեկ ու մերկ չքաւոր,—
 Պահանջիր վերջին ու պարզ պատասխան:
 Ելէք բոլորդ, սեպցած, դալուկ,
 Կոպիտ ձեռքերով, շապկով պատառուն.
 Ելէք երկունքի որդիներ խղճուկ,
 Ուժասպառ, թօշնած, ցաւերով անքուն...
 Արթնացիր ամբոխ, դու համբերատար,
 Ելիր ժողովուրդ աշխարհասասան.
 Թող երևելին, հարուստն անպատկառ
 Լսեն նոր խօսքդ, լսեն ու զողան...
 Քեզ իրաւունքներ, բախտ, ազատութիւն,
 Քեզ եղբայրութիւն պահանջիր հաստատ.
 Պահանջիր զոհեր, սէր, կարեկցութիւն,
 Արդարութիւնը թող իշխէ անխախտ...
 Ե՛լ, բոբիկ, տնանկ, խեղճ աշխատաւոր,
 Թողիր ներքնայարկ ու խոնաւ մառան.
 Ելիր վշտաբեկ ու մերկ չքաւոր,
 Պահանջիր վերջին ու պարզ պատասխան:

ՎԱԼԱՆԱԿԱՆ ԼԷԳԷՆԴԱ

(Մարտիմ Գորկի)

Խոբին անտառում ապրում էր փերին,
 Յաճախ լողանում լայնածուփ գետում,
 Մի օր անզգոյշ յանձնեց ջրին
 Եւ զգաց իրեն փակւած ուռկանում:
 Խեղճ ձկնորսները վախեցին սաստիկ,
 Սակայն ներկայ էր Մարկոն պատանի.
 Յաւերժահարսին գրկեց քնքշիկ
 Ու ջերմ համբոյրներ շապլեց արի:
 Եւ փերին կարծես ոստ էր մի ձկուն,
 Հզօր ձեռքերում հէնց թփրտում էր.
 Մարկոյի աչքին նայում էր ծիծղուն,
 Ժպիտներ յղում Մարկոյին նւէր...
 Ու նա փայփայեց Մարկոյին ողջ օր,
 Սակայն երբ ընկաւ գիշերը խաւար,—
 Կորաւ մեր ձկուն փերին ժպտաւոր
 Ու տխրեց Մարկոն, տխրեց վշտահար:
 Եւ անտառի մէջ, Դանուբի ափին
 Քայլում է Մարկոն գիշեր ու ցերեկ,
 Միշտ հառաչում է՝ «ձր է իմ փերին»,
 Ծփուն ալիքներ—նրան՝ «չգիտենք»:
 Եւ նա զայրացաւ՝ «չէ, դուք ստում էք,
 Հիմա խաղում էք, գիտեմ, նրա հետ».
 Եւ յիմար տղան ընկաւ վշտաբեկ,
 Ընկաւ Դանուբը ու կորաւ յաւէտ:

Լողում է դարձեալ փերին Դանուբում,
 Ինչպէս լողում էր Մարկոյից առաջ,
 Իսկ Մարկոն չկայ... Բայց էլի տրտում
 Երգը յիշում է Մարկոյին այն քաջ:

Իսկ դուք ապրում էք աշխարհի վրայ,
 Ինչպէս ապրում են ճիճուները կոյր.
 Հեքիաթ չեն կանչի ձեր մասին վկայ,
 Ձեր մասին երգ էլ չեն ասի ոլոր:



* * *
(Լ. Շուսուփա)

Հարստութիւն իմ, օ ազատութիւն,
 Ո՛ւմ քեզ, անգինս, ես զո՞ն կըբերեմ.
 Քեզ, որի համար մեծ ոյժ — Բնութիւն
 Ինձ կեանք է տւել այնքան ժպտադէմ...
 Մի՞թէ հին երգին ցանցառ, խաբուսիկ, —
 Սիրոյն քմահաճ ու սին ցանկութեան, —
 Մի՞թէ թեերը քո չնաշխարհիկ
 Թոյլ կըտամ կապել ցանցերով ունայն:
 Պերճ քնքշութեան, ճոխ շերմանոցին
 Մի՞թէ զո՞ն կըտամ քեզ, կապոյտ կամար,
 Կամ թէ օտարի յաղթական կառքին
 Բախտս կըզարբնեմ ոսկով հրավառ:
 Օ՛ ազատութիւն, կայ մի ասպարէզ,
 Ուր քեզ կարող եմ բերել ողջակէզ.
 Իմ ժողովրդի բախտաւորութեան
 Ես քեզ անարցունք զո՞ն կըտամ միայն:



Լ Ո Ւ Ս Ա Դ Ի Մ Ի Ն

(Ն. Մինսկի)

Մի յուզւիր երբէք, անխոնջ բարեկամ,
 Եթէ մեր շուրջը խաւարէ անգամ,
 Եթէ մարում է աստղերի շարան,
 Եթէ լուսինը ծածկւեց ամպերում
 Ու մառախուղը բարդում է դաշտում. —
 Վե՛հ լուսաբացի աղջամուղջն է այն:
 Մի խրանիւր երբէք, դու անփորձ եղբայր,
 Որ սողունները՝ ձգելով բուն, այր՝
 Տիրել են ջանում երկիրը խաղաղ.
 Վազում են սարդեր և ճահճի վրայ
 Օձը դարանից փշշում է հիմայ՝
 Այդ սողունների փախ է լուսավախ:
 Մի տիրիւր երբէք, որ մութ գիշերին
 Մարդիկ դեռ քնով հանգչում են խորին,
 Որ հէնց լաւում է երբեմն անկարգ
 Մեր աքլորների այն կանչը յիմար
 Կամ թէ շների հաչը խտտաչար, —
 Դա երազ է լոկ, լուսնահաչ դադարկ:



« Լ Ս Ի Բ »

(Մ. Միխայլով)

Որպէս մի սև դաւ, խիղճ բռնակալի,
 Գիշեր է դաժան.
 Աշնան մէզի մէջ հանդէս է գալի
 Բանտը ոգէսպան:
 Զինւորն է հսկում, քայլում անդադար,
 Սակայն մէկ նայիր.
 Կարծես հառաչ է զիլ ու ցաւագար՝
 — Հէյ, լսիր, լսիր...
 Որքան պարիսպը բարձր է, ամուր,
 Փականքը — երկաթ.
 Բանտապետների հայեացքն էլ սուր
 Ու գէնքը պատրաստ,
 Որքան և լուռ է բանտը անաւոր,
 Զինւոր, դու հսկիր,
 Գո՛ւ մի հաւատայ լռութեանը խոր՝
 — Հէյ, լսիր, լսիր...
 Տես բանտարկեալը վանդակի ետև
 Կանգնած է մենակ.
 Հեռուն է տարւել մտքով սրաթև,
 Տենչով համարձակ:
 Ոչ մի ձայն չկայ... Կամ շունն է հաչում,
 Բուն էլ ճշում զիլ,
 Կամ թէ զինւորն է շափածոյ ձայնում՝
 — Հէյ, լսիր, լսիր...

«Երկար տարիներ, ոչ ամիս, կամ օր,
 Ես պիտի տանջւեմ.
 Ծարաւ եմ կեանքին, ազատ ու բարօր,
 Կորչիր, բանա դժխեմ.
 Գնդակ և սւին կամ ազատութիւն,
 Գիշեր, ազատիր.
 Տուր, բարեկամս, կեանք և փրկութիւն»...
 — Հէյ, լսիր, լսիր...
 Ու՛հ, աղմուկ... Ընկաւ... Թուաւ շուտափոյթ...
 Շնիկը չխկաց.
 «Ո՞վ է»... Որոտաց գնդակը անգութ,
 Բանտը դլրդաց:
 Վառին ճրագներ, վազեցին մարդիկ...
 «Բարև՝ մնացիր»...
 Վիրաւոր կրծքից թուաւ մեն-մէկրիկ...
 — Հէյ, լսիր, լսիր...
 Եւ լուռ է դարձեալ... Կամարում վհատ
 Երևաց լուսին,
 Պահ մի ամպերից նայեց վշտակաթ
 Ու ծածկւեց կրկին:
 Զինւորն է հսկում, քայլում անդադար,
 Սակայն մէկ նայիր.
 Կարծես հառաչէ զիլ ու ցաւագար՝
 — Հէյ, լսիր, լսիր...



Մ Ր Ր Ի Կ

(Տան)

Ընկնում է լուծը ձմրան անհամբոյր,
 Կանաչ գարունն է քայլում անդողդող.
 Այգը պատուելով խաւար վարագոյր՝
 Մեծ Ռուսաստանին յղում է իր շող:
 Ու նա բացում է կապոյտ ճաճանչով,
 Յըցում դէպի վեր հրաշէկ պտակ.
 Դա փոթորիկ է արնաներկ սրով
 Մեզ ազատութեան աւետում հրեշտակ:
 Ողջոյն քեզ, մրբիկ, թօբ սրաթև,
 Յընցիր գլուխդ ամուր ու հօօր.
 Ծիւ աշաարակներ քանդիր քո առջև,
 Յըբր անտառը հակայ, դարևոր:
 Անեզը ծովը շարժիր մինչ յատակ,
 Մինչև խորին ծոց յուզիր ահալի.
 Մեր կերտներէ կենդանի կրակ
 Հրդէհ գարձրն մեծ ու վիթխարի:
 Քեզ պատրաստում ենք արժանի ողջոյն.
 Զարկիր դառնալով մի ահակոչնակ,
 Մենք ազատութեան երգերով հնչուն
 Խուլ կրդարձնենք որոտ ու կայծակ:
 Գեղ գանգուրներդ ծածանիր հպարտ՝
 Մենք քեզ ընդառաջ կեյնենք քաջաբար,
 Դէպ տարրերային և աննկուն մարտ
 Դրօշ կրբունենք կաակարմիր ու վառ:

Այնտեղ կըգրենք՝ կորչի բռնութիւն!
 Պէտք չեն խայտառակ կապանք ու շղթայ.
 Արատի գահը--գրահով կանգուն—
 Մենք կըտատանենք մեր կոչով անահ:
 Եւ մեզ կըծնւի օգնութիւն խիզախ,
 Մենք կըփորփորենք քար--սալայատակ.
 Քարով թշնամուն կղիմենք անվախ,
 Կըկառուցանենք ամրոց—յաղթանակ:
 Զուր է սպառնում չնչին բռնաւոր
 Մեզ օրհասական արձիճ—կարկուտով.
 Մենք վէրք ենք փնտրում սուրբ և պատուաւոր,
 Մենք մարտ ենք տեսչում անվեհեր սրտով:



* * *
(Ա. Բօլկովսկի)

Ազատութիւն! ազատութիւն! մեզ ճնշում են,
հալածում,
Ողջ-ողջ թաղում են միմիկ, տաղտկալի, խոնաւ
բանտերում.

Ձգում են Սիբիր, տայգը, անապատ, հանքերը
խաւար,
Բայց ժողովուրդը կըլսէ կոչը, մեր ձայնը, բառ-
բառ.

Ա՛հ, ազատութիւն!
Վրէժ թշնամուն:

Ձգում ենք տունը մեր հայրենական
Ու քեզ ենք դիմում, անբախտ ժողովուրդ,
Որ այնքան խեղճ ես ու հալածական.

Անձնական բախտը ամօթ է այնտեղ,
Ուր յամառ չարը տէր է, թագաւոր,
Եւ բռնութիւնը լուծ հանապազօր:

Ա՛խ, քանի անգամ՝ չը ճանաչելով
Մեզ բարեկամներ երկրին հայրենի,
Ձեռք չմեկնեցիր սրտագին սիրով
Բարեկամներիդ՝ քեզ դիմող գաղանի,
Սակայն մեր ցաւի, տանջանքի սիրոյն,
Դու ձեռք կմեկնես մեզ միմիկ բանտում:

Մենք մեր սրտերը դարձրինք զնդան կարծր,
անսասան,

Քանի չարիքը աւել էր ճնշում մռայլ ու տխուր,

Այնքան և մութն ուժեղ էր խփում, զարկում
փութաջան.
Մենք կռում էինք, աներեր կռում հրաշէկ մի սուր,
Թէ—հրեշտակապէտ—նա անհուն վշտի սգաւոր
փայլով

Հալածէ չարը, ամեն բռնութիւն ու ամեն խոտվ:
Եւ մեր արիւնը կայծի էր փոխում վառ, հըրա-
բորբոր.

Որ կոշտ երկաթը կուր ու կոփւի հապճեպ, ան-
խնայ,

Իսկ ամենուրեք սաւառնում էին կայծերը—բողոք-
Սրբազան գործին չէ էլ հարկաւոր և ոչ մի
ընծայ,—

Իսկ թէ կայծերից շատ ու շատ դէմքեր կը փայ-
լեն պայծառ,
Թող մեր արիւնը ցոլա ու ցայտէ տենդոտ ու
կայտառ:

Կը գայ օր հաստատ
Եւ արև փայլուն,
Մեր երկիրն ազատ
Կըտայ մեզ ողջոյն:




ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ

(Նեմիրովիչ-Պանչենկո)

Երբ բանւորներիս վառում է ճրագ
 Վաղ հաւախօսին, մութը առաւօտ,
 Քշում է կարիք, քաղցը դժնդակ
 Կօպէկի համար գնդանների մօտ,
 Ու երբ մեր կեանքում մինչև վերջին շունչ
 Մարդու մկանունք չէ առնում դադար,
 Դաժան ծերութեան առջև անտէրունչ
 Քանի ճկում ենք վիգներս խոնարհ, —
 Դէհ, միմիանց համար եկ կանգնենք արի
 Ու երբ խմում ենք խմբով միասին,
 Թնդանօթ գոռայ — խմենք ու բարի,
 Վեհ ազատութիւն մաղթենք աշխարհին:
 Ժլատ գետնիցը, հողից աղքատիկ
 Եւ խոր ծովերից մեր ոյժը մարտով,
 Յարատև կուով հազուատ, ուտելիք
 Պարզէ է բերում աշխարհին ցաւով.
 Տես, հասնեն պտուղ ու հասկեր դաշտից,
 Ոսկի, մարգարիտ, մի կեանք բերկրալից...
 Իսկ մենք — խեղճ ոչխար... Աշխարհին զարմացք
 Մեր բուրգն է դառնում թիկնոցի մանուածք:
 Եւ ի՛նչ է բերում աշխատանքը մեզ,
 Երբ թիկունքներիս սեղմում է այնպէս.
 Ո՛ւր են պտուղներ մե՛զ գործ — քրտինքի,
 Մենք մեքենայ ենք, մարդիկ վաղեմի...

Մեր աշխատանքը ամեն մի վայրկեան
 Յանցում է երկիր հազար հրաշքով,
 Բայց մեղրը շինւեց, — տիրոջ գաւազան
 Մեղուներին է քշում անխռով:
 Յնցոտիներով գարշ խրճիթներում
 Պատրաստ ենք խղճուկ մեր կեանքը կարճել,
 Եւ մեզ հետ միայն բուն է գիշերում,
 Ու գիշատիչը թառում անարդել.
 Մեր երակներում սակայն աւիւնով
 Խաղում է տաքուկ, դալարուն արիւն.
 Է՛հ, ո՞վ չէ մեզնից տենչում կարօտով
 Դաշտեր ու կաղնին, ցերեկը սիրուն:
 Դէհ, միմիանց համար եկ կանգնենք արի
 Ու երբ խմում ենք խմբով, միասին,
 Թնդանօթ գոռայ — խմենք ու բարի,
 Վեհ ազատութիւն մաղթենք աշխարհին:



* * *

Բանուոր-եղբայրներ, բախտի խորդ որդիք,
 Ախ դուք ապրում էք անլոյս ու անգէտ
 Ոչ ոք չէ ուզում լսել ձեր կարիք,
 Ոչ ոք չէ լացում ձեր ցաւ—դարդի հետ:
 Կեանքի փուշը ձեզ մանկուց է ճանաչ,
 Ընկեր ուղեկից—սովը ցաւատանջ,
 Անհուն երկունքը ցրտաշունչ ձմրան,
 Անքուն գիշերը, վաստակը դաժան:
 Ձէք եղել անհոգ, ազատ պատանի,
 Ձեզ, խղճուկներիդ, հաճոյքն է օտար.
 Շուտ ձեզ կարիքը անելանելի
 Մայրենի տնից քշել է իսպառ:
 Եւ գործարանի հեղձուկ կազարմում
 Ձեր օրն է սահում ծոյլ ու անմխիթար,
 Ճնշում են անգութ և չարախնդում,
 Որպէս սարգերը արնի սիրահար:
 Հաստափոր տէրը—յայտնի սրիկայ—
 Ձեր չնչին վարձը ուզում է կարճել,
 Խօսուն վարպետը, դարձեալ խաբեբայ,
 Ձանում, տքնում է օրը երկարել:
 Չկայ ափսոսող ձեզ, անբախտներիդ,
 Ձեզ հալածում է փքուն մեծաւոր,
 Արբած թաղապետ ձեռում սառնասիրտ,
 Ամեն չինոգնիկ հայհոյում ստոր:

Ազատ խօսքը չէ հասնում ձեր մտքին.
 Փակել են ձեր աչք, փակել են ախանջ,
 Իզուր ձեր հոգին ձգտում է լոյսին.
 Պինդ կաշկանդւած է ուղին լուսաճանչ:
 Իսկ թէ ձեղքելով կուռ արգելարան՝
 Ձեզ խօսք է հասնում թարմ, անսովոր,
 Ձգել դրդում են հինօրեայ սահման
 Վեհ զգացմունքներ, տենչեր նորանոր,—
 Ապա, ընկերներ, ձեզ յանկարծակի
 Չարը, դահիճը ճանկում են անգութ.
 Գալիս է թախիծ, Չարը էտապի,
 Աքսորը հեռու և բանտերը մութ...
 Եկաւ ձերութիւն և անօգնական
 Մութ մառաններում հեծում էք նկուն.
 Չկայ ձեզ կայան, միայն գերեզման
 Ու մահ էք խնդրում իզուր, ապարդիւն:
 Ահա ձեր կեանքը. անլոյս, վշտալի.
 Անխնդում ջահէլ, ձերուկ վիրաւոր,
 Մահը—բերկրանք և հիւր ցանկալի,
 Դառնալից վիճակ ու բախտ սեւաւոր:




Դ Ե Ր Ձ Ս Կ Ո Ի Հ Ի Ն

(Անդրուսն)

Դուրսը—երկինք լալագուր,
 Դուրսը—չքնաղ, պերճ գարուն,
 Իր նկուղում նա ախուր
 Կար է գնում օրնիրուն:
 Ողջ ցերեկը մինչ գիշեր
 Ձէ բարձրանում իր տեղից
 Ու կորացած, աներեր
 Հն կարում է տենդալից:
 Ձին ամպերը խուռնեբամ
 Տես, լողում են կամարով,
 Հոգն է վշում քաղցրահամ
 Պերճ բնութեան բոյրերով:
 Եւ կարողի խուղը մութ
 Ձոգն է թափում դաշտերի.
 Նա կարում է, բայց կարօտ
 Սիրոյ, բախտին բերկրալի:
 Ազմկում է մեքենան
 Ու կտաւը խշխշում,
 Իսկ խոհերը սե, դաժան
 Նրա կրճքին են բարդում:
 «Մենակ, անսէր ու գերի
 Չորս պատերում բանտարկւած՝
 Ես թօշնում եմ վշտալի,
 Ձեռքս կարով կաշկանդած:

«Ինչպէս ծաղիկ անարեգ
 Թառամում է իմ հասակ,
 Ահ, հոգնած եմ, վշտաբեկ.
 Հանգիստ աւէք գէթ արձակ...
 «Սոնջացած է, ցաւագար
 Կուրծքս դառն ջանքերից...
 Փախչել հեռնն, դաշտ, անտառ
 Սև ու անքուն հոգսերից»...
 Արցունքները խեղդում են,
 Մէզը պատում աչքերին.
 Նա կարում է, հոսում են
 Արցունքները վշտածին...
 Իսկ կամարում բարձրածայն
 Երգ է ասում արտուտը,
 Դանդաղ, որպէս քարաւան,
 Ամպը գնում իր գաղթը:
 Նա կարում է, ոյժ չկայ,
 Գործը ընկնում է ձեռքից,
 Սև ու ծանր, անխնայ
 Ճնշում վիշտը դառնալից:
 Նա լալիս է... Ու երկար,
 Երկար կըթնած սեղանին,
 Որպէս մանուկ, վշտահար,
 Արտասուում է ցաւագին:
 Իսկ պերճ գարնան գօլ քամին
 Թարմ, գուարթ ու կայտառ
 Նրա գանգուր հիւսերին
 Ձէ կամենում տալ դադար:

Փաղաքշում է, համբուրում.
 «Բաւ է, մի լար յորդառատ.
 Սև վիճակին չեն օգնում
 Արցունքները աղեշատ»...
 էլի տարտամ ու տաղտուկ
 Խշխշում է կոշտ քաթան,
 Հնչեցնում իր աղմուկ
 Անկարեկից մեքենան:



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ս Ա Հ Մ Ա Ն Ո Ի Մ
 (Պետր Եսկուբովիչ)

Հագիւ ոտք դրի հովասուն հովիտ,
 Ուր նինջ էր մտած ատառը խորունկ՝
 Ալեկոծւեցին հզօր կատարներ
 Մոճիք հանեցին անորոշ աղմուկ:
 Ու դա հայրենեաց կոչի՞ էր ողջոյն,
 Պարսաւ էր արդեօք թէ քամու հառաչ,—
 Ինձ տիրեց բերկրանք անկաշկանդ, անհուն.
 Անցած երազներ յարեան իմ առաջ:
 Եւ բոլոր ցաւը անջատւած կրծքիս—
 Յոյս, անէծք, գանգատ, աղեշատ արցունք,
 Ինչ որ յաւիտեան կիզւել էր կարծես,
 Որպէս քնքոյշ լար կտրւել գաղտուկ,—
 Իմ համր հոգում հնչւեց նորից.
 Ես չօքի առջև հսկայ բուների՝
 Եւ չքաշւելով կապոյտ կէսօրից՝
 Նոցա գորշ մամռին անուշ պաշ արի:
 --«Ողջոյն քեզ, անտառ, լայն, աղմկայոյզ,
 Ողջոյն քեզ, սահման, հայրենի հանդին՝
 Կատարւեց երազն իմ խելակորոյս.
 Մայր իմ—հայրենիք, եկաւ քո որդին:
 Վերցնւր ինձ ազատ, արիւնս ամբողջ,
 Խոհերիս թափը, կամքս անդողղոջ՝
 Քանի շնչում եմ, ապա խանդավառ
 Ես պիտի երգեմ քո վիշտը անծայր.
 Տանջւելով հեռու, ժանտ, օտար երկրում,
 Ես քո սիրոյ մէջ յանգ էի կուում»:
 Եւ անտառը հեզ, տխուր շրշուկով
 Ծամբաս փռում է փշոտ ոստերով...

Ս Տ Ր Կ Ի Ե Ր Ա Ձ Ը

(Հենրի Լօնգֆելլօ)

Յոգնած պառկել էր բրինձի արտում,
Տօթը այրում էր նրա կուրծքը բաց.
Ձեռքին մանգաղ էր, փափուկ աւազում
Գանգուր գլուխը խորացել էր ցած.
Եւ մէզ-սոււերում խորանուշ քնի
Նորից նա տեսաւ երկիր հայրենի:
Արքայ Նիգերը սահում էր դանդաղ
Եւ ծաւալում էր հեռուն անսահման.
Ինքը իշխան էր, հայեացքը ուրախ
Ձգել էր հանդին իր հայրենական.
Եւ ղօղանջելով իջնում էր հովիտ
Փայլուն լեռներից քարաւանը խիտ:
Եւ իր թագուհու դէմքին սևաչեայ
Նայում էր նորից քնքոյշ բերկրանքով,
Ու ձայնում էին տոհմ ու երեխայ,
Իր զաւակներին զրկել էր սիրով:
Դանդաղ ցընցեցին կոպ-արտաւանունք,
Դէմքը աղօսեց աղեկէզ արցունք:
Նժոյզը հեծած գետի հոսանքով,
Ծանօթ ափերով թռչում էր արագ.
Սանձը փայլում էր ոսկով, արծաթով,
Ձիւ տրոփիւնը տալիս արծազանք.
Սրի պատեանը խոր լուսթեան մէջ
Քսւում էր ձիուն, աղմկում անվերջ:

Առջևում կարծես արնոտ թաշկինակ
Նագով թռչում էր վառ ֆլամինգո,
Եւ նա հանդերով դալար բովանդակ
Հետապնդում էր մինչև երեկոյ.
Ահա կաֆրերի խուզերը անգոյն
Եւ ովկիանոսը կապոյտ ու ծփուն:
Եւ նա լսում էր առիւծի մշիւն
Ու մարդագէլի կալանչը ուժգին,
Ինչպէս ջրածին գիշերւայ պահուն
Ջարդում է եղեգ շամբուտ գետափին,
Եւ նրա գլխին լողում է ժխոր,
Որպէս մարտակոչ խնդալից ու գոռ:
Եւ լեզուներով խօսուն, բիւրաւոր
Անտառն էր կանչում դէպի ազատ կեանք,
Հետում են լայն-լայն, մտորում անդորր
Երկինք ու երկիր, աշխարհը արձակ:
Դէմքը յուզեցին գրգիռ ու ժպիտ,
Ամուր փակւեցին աչքերը վճիտ:
Չէր զգում տօթը, ինչպէս խարազան
Շառաչեց, ընկաւ յոգնած թիկունքին...
Մահը իջել էր յաւիտենական
Եւ արտում թողել խուլ ու անշունչ դին,
Տրորւած շղթան, այլևս անգոր
Ճնշել, մաշելու ոգին թևաւոր:



* * *

(Պետր Եակոբովիչ)

Խաղաղ գիշերին
 Թէ ետուն ցերեկ,
 Քնած թէ արթուն՝
 Ինձ ամենուրեք,
 Որպէս անհանգիստ
 Ստուեր երերուն
 Յողում է տխուր
 Քո դէմքը դժգոյն.—
 Իմ մանուկ չքնաղ,
 Իմ խղճուկ մանկիկ,
 Հարազատ մանկիկ:
 Միշտ երազում եմ՝
 Երկիր անկենդան,
 Երկիր աքսորման, —
 Յուրա ու սպիտակ
 Զիւնի մի սաւան,—
 Եւ դու խոր փորած
 Հատիկ մոռացած:
 Կարծես տխրագին
 Շուրջդ է շրջնում
 Տայգը*) կուսական,
 «Մանուկ անպաշտպան,

*) Տայգը (тайга) սիբիրական անտառախիտ տունդրա:

Իմ խղճուկ մանկիկ,
 Տաւազար մանկիկ»:
 Ինչո՞վ տարաբախտ
 Անձկալուոյս օգնեմ,—
 Լոկ շըշնջում եմ
 Անգոր սպառնալիք
 Անգութ թշնամուն
 Եւ ցաւով գաղտուկ
 Օրօր եմ ասում,
 Դայակի նման
 Վշտով փայփայում
 Տեսիլդ սիրուն,
 Տեսիլդ դժգոյն,—
 —Իմ որբուկ մանկիկ,
 Ապաբախտ մանկիկ;
 Հարազատ մանկիկ:



Ջ Ո Ի Լ Հ Ա Կ Ը

(Անդրուսոն)

Անիւ, մեքենայ հանում են աղմուկ,
 Հինածով սահում, ոստոստում մակոյկ,—
 Աչքերը յառած թելերի պարին՝
 Ժիր աշխատում են ձեռքերը բանուկ:
 Բանում է ձեռքը... քրտինքը—կարկուտ,
 Սիրտը թնդում է ուժգին բաբախով.
 Թելը սողում է անվերջ ու անփոյթ
 Ու գործը եռում գոռում—բրոտով:
 Իսկ պատից դէնը ցրցւած է անտառ,
 Գաշտն է տարածւում լւնյն, անծայրածիր,
 Կուրծքը շնչում է թեթև ու կայտառ,
 Կանաչ սաղարդը ժպտում սիրալիր:
 Զով է անտառի խորքը բուրալից,
 Եւ շուրջը խաղաղ ու այնպէս խաղաղ...
 Ծփում է հաճար... Ամպերը անբիծ
 Կապոյտ եթերով լողում են դանդաղ...
 Ազատ, ազատե՛լ լսեղդուկ զնդանից,
 Անքուն հոգսերից ու աշխատանքից.
 Իսկ քեզ մեքենան՝ «երբէք, ան էրբէք»,—
 Այստեղ յաւիտեան բանտարկեալ ենք մենք:
 Անիւններ ահա բռնել են մի պար,
 Իսկ չուանները վստում, զալարում,
 Թելը ոստնում է, որպէս խելազար,
 Մեքենաները գոռում, հռնում.

«Անպտուղ խոհեր ու անմիտ պատրանք՝
 Անտառ ու դաշտը ազատ, լախարձակ՝
 Դուք որդիք հիւանդ մի ունայնութեան,—
 Դալուկ սոււերներ անհող մարդկութեան»:
 Անպտուղ խոհեր ու անմիտ պատրանք...
 Անծայր կարիքը, խոնաւ ներքնայարկ,
 Ցուրտն ու սովը, պարկը մուրացկի,—
 Ահա վարձը քո սև աշխատանքի:
 Ո՛չ ժպիտ, ո՛չ երգ... Ժամանակ առժամ
 Անոյժ զայրոյթն է փայլում քո աչքին,
 Արցունք երերում, և շրթիդ տարտամ
 Մեռնում անէծքը դառն, ցաւազին:
 Եւ բազուկներդ սպառնում են... գործում,
 Մենք գործում ենք միշտ, գործում անդադար.
 Անիծեալ թելեր սողում են, սողում,
 Ամեն ինչ շուրջը փախչում միալար:
 «Շո՛ւտ, շո՛ւտ», քշում են դազգեահ ու չուան
 Եւ անիւները թափով վիթխարի...
 Մեր սիրտը լեցուն թախիծով դաժան,
 Մեր սիրտը աղբիւր անյոյս արցունքի:
 Շո՛ւտ... Մարմին ու կամք հիմա շղթակուռ,
 Խոնարհ գործում ենք, որ յետոյ խոնարհ,—
 Թէ թօշնեն ձեռքեր ու դառնան ոսկոռ,—
 Գարշ մառաններում մեռնենք վշտահար:
 Գործում ենք... Փոշին խեղդուկ ամպերով
 Կախում է մեզ վրայ, լողում, երերում,
 Անիւ, մեքենայ շարժւում են տենդով,
 Անիծեալ թելեր սողում հա՛ սողում...

Հ Ա Ն Ք Ա Հ Ա Ն Ը

(Վօլկէնշտէյն)

Գլուխն է ցաւում յողնած ուսերին,
 Զարկը գարկին է յաջորդում անփոյթ,
 Եւ լոյս սփռելով մթին պատերին՝
 Ճառագայթում է լամպարը աղօտ:
 Զարկիր հանքահան՝ վիճակիդ խոնարհ,
 Յիշիր, չես կուել դու բախտ քեզ համար:
 Փորում ենք ցերեկ, փորում ենք գիշեր,
 Գետնի որտին ենք ձգտում յարածուն.
 Քարոտ խորքերից ջանքով աներեր
 Գտել, հանել ենք մենք գանձեր անհուն:
 Զարկիր հանքահան, մի լինիր ներհակ,
 Գուցէ քեզ կուես երջանիկ վիճակ:
 Ո՛ւհ, ի՛նչ աղմուկ է, հառաչ, աղաղակ...
 Սև է մեր գործը և վտանգաւոր.
 Սյուտեղ մէկը չէ մարել մեն-մենակ
 Քարերի տակին կրծկւած անգօր:
 Զարկիր հանքահան՝ վիճակիդ խոնարհ,
 Յիշիր, չես կուել դու բախտ քեզ համար:
 Բիրտ է մեր գործը, և երբ լոյս աշխարհ
 Մենք դուրս ենք գալիս յողնած ամբոխով,
 Դաժան է մեր դէմք՝ թէ քաղցրաբ ր
 Կին ու երեխայ ձայնում են երգով:
 Զարկիր հանքահան, մի լինիր ներհակ,
 Գուցէ քեզ կուես երջանիկ վիճակ:

Սահում է կեանքը, իսկ գետնի տակից
 Զարկը հնչում է միշտ էլ չափածոյ,
 Թօշնում է ձեռքը երկաթ քլունգից,
 Սրաին կուտակում հոգսը անհաճոյ:
 Զարկիր հանքահան՝ վիճակիդ խոնարհ,
 Յիշիր, չես կուել դու բախտ քեզ համար:
 Լսում է ինչպէս մթին անկիւնում
 Բիրտ հոհոտում է ոգին հեղնաբան,
 Ու փսփոտում է խոնաւ խաւարում,
 Սաբում, գրգռում ականջը մարդկան:
 Զարկիր հանքահան, մի լինիր ներհակ,
 Գուցէ քեզ կուես երջանիկ վիճակ:



Գ Ո Ի Ս Ա Ն

(Սկիտաւեց)

Զիլ զօղանջում է բամբիւրը հնչուն,
Յնձութեան մասին խօսում դալլալով.
Ես մտքեր-տաղեր լարին եմ խփում,
Այն խենթ քամին է ցրում դաշտերով:

Բամբիւր-մտքեր, երգերի հանճար
ժառանգ է թողել իմ հայրը աշուղ,
Ես էլ աշուղ եմ, մտքի ազգարար,
Հայրենի երկրիս երգիչ սրտաբուլիս:
Եւ ես քայլում եմ աղքատ, պատառուն,
Զիլ զօղանջում է բամբիւրը հնչուն:

Անցնում եմ անա սարեր, դաշտ ու հանդ
Ու քամիներին երգում սիրախանդ,
Իսկ հէնց Վօլգային ելնում եմ ի տես
Հանգչել գինետան ախորժում եմ ես:
Երգում է, խմում այնտեղ տօներին
Եւ ուրախանում բանուր-բազմութիւն,
Ու հէնց զարնում եմ ես իմ լարերին—
Սոխակը ափին լում է իսկոյն:
Հոսում է շուրջը իմ երգը արծաթ,
Արևը ամպից ցօլում խանդակաթ...
Եւ ժողովուրդը— հզօր արեգակ!
Տակառապետը քամում է գինի,

Հոգիս լեցուն է և առանց բաժակ!
Լոկ դօղանջում է լարը հնչալի:

Ահ, որքան զիլ են դօղանջում լարեր...
Քար-պալատների այն լում է տէր.
Նրա հոգու մէջ թախծալի աշուն,
Մատաղ երգչին է դիմում աղաչուն.
«Իու մի տաղ խաղայ, մի երգ տխրալի,
Արցունքով լւամ հոգիս մեղսալի,
Իմ քնքոյշ խղճին անդորրութիւն տնւր,—
Աւ քեզ խմելիք, սու քեզ կերակուր!
Թող քո բամբիւրը հնչէ ինձ համար
Թէ ժողովրդին ընկեր եմ, եղբայր»:

Մտնում եմ այցի հարուստի պալատ
Նրան երգելու իմ երգը հպարտ,
Երգում եմ նրան ծիծղով հնչալուր.
«Բո հոգու վրայ սև կեղտ կայ ու մուր,
Ես քեզ մաքրելու չեմ երգի աւանդ
Այնպէս ոլորուն, մելանոյշ մի տաղ.
Թող հոգուդ վրայ պառկէ մութ ստուեր,
Ձեզ ազատութեան երգը չէ ախորժ.
Ընկնում է կարծես մկունդ մահաբեր
Փուճ գլուխներին և դադարի, և բոշ:
Մեր հողն ուժասպառ,
Էլ ի՞նչ պահանջ որ.
Մնում է չոր կառ,
Օձեր թունաւոր:

Ես—օձ—սողում եմ,
 Ձեզ երգով խայթեմ,
 Ես ձեզ—վէրք ու թոյն,
 Աստուած—ցաւ անհուն:
 Կախաղան անն,
 Վրէժ անխնայ,—
 Ձեզ կեանքի արշաւ
 Տալիս է համբու:
 Խնդացէք՝—«մի սուտ!»
 Փշոտ, ինչպէս կառ».
 Դա է ժողովուրդ,
 Ես նրա—նկար:»

Ա. իս, էլ չաւարտեց իր երգը գուսան,
 էլ չէ այցելում մարդաշատ շուկայ,
 Ոչ էլ երևում ցարի գինետան,
 Երգը չէ հնչում և գետի վրայ:
 Միայն տեսնում է ամեն երեկոյ
 Խոնուում են մարդիկ բերդի առաջև,
 Հնչում է բանտից երգը չափածոյ
 Թ՛նդում, Վօղանջում լարը հեիհե...
 —



Ա. Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ի Թ Ի Ի Ն
 (Էմիլ Վերնարէն)

Ահա փողոցը գրկել է մըրրիկ:
 Եւ ահագանգի ժխորում սաստիկ,
 Ծանր քայլերի խելագար պարում,
 Ծեծ, աղաղակի գոռում-գոչիւնում
 Խենթութիւնների հողմերին դէպ վեր
 Ծով գլուխներից ծառսում են ձեռքեր:
 Վառւում են կրքեր, ծառանում ստէպ.
 Անէծք ու պատրանք, յոյսը ու գայրոյթ՝
 Դառնում են քաօս, քաշում անվրէպ
 Դէպ մահու գիրկը, գերեզմանը մութ:
 Եւ ահա կարմիր հրից ոսկեգօծ,
 Կարծես պսակը ու թագը գլխին,
 Վառ ծիրանի է հագել բազ-փողոց,
 Զուգւել մեռանող ալ արեւմտին:

Ու դաժան մահը, որպէս թագուհի,
 Ծոխ ծառանում գուժկան որոտից.
 Կարծես մղձաւանջ, տեսիլ ամենի
 Յառաջ սլանում՝ սև, արհաւրալից:
 Զողերը ցըցած գլխերի շարան,
 Անգութ պոկոտած վարդերի նման,

Միշտ նրա առաջ
 Մի ձախ և մի աջ
 Դողում է մեղմիկ, երերում սահուն,
 Ողողած լոյսով բոսոր ու փայլում:

Թուշէ կրկորդի հագով բօթաբեր,
 Չափելով վազը ժամ ու վարկեանի,
 Ձիլ, կարուկ, խռպոս գոռում են դէպ վեր
 Թնդանօթները անկուշտ, ծարաւի:
 Եւ ժամացոյցը էլ չէ հարկաւոր,
 Ծիլ աշտարակից քերւած է քարով.
 Աղօս հայեացքը մարել է քնով,
 Չէ լուսաւորում էլ ակը բոլոր:
 Կարծես կոպերով ծածկել է հիմայ...
 Թուշէ սլաքներ կանգնել են հանդարտ:
 Եւ ժամանակի վաղուց չափ չկայ
 Այն կուռ սրտերին—երկաթ ու պողպատ:
 Սաւար է... Չարգանդ...
 Սակայն անվկանդ,
 Լի խենթ ու կրքոտ մի խիզախ թափով
 Արեկոծւում է ժողովրդի ծով:

Ա՛հ, ժողովրդի կատաղութիւնը—
 Այնքան վիթխարի, այնքան վայրենի.
 Իրեն արելու էլ մի ոյժ չունի,
 Երակների մեջ — ապստամբ արիւն,
 Շունչը հեիհե և ազմկալի,
 Չայնը յաղթական, փոթորիկ անքուն,
 Հայեացքը դալուկ, մեռերապատկեր.—
 Աճում է ոյժով իր տարրերային,
 Գորշ գեանից դէպի կուտակւած քարեր
 Հսկայ ոստիւնով սլանում ուժգին:

Ակնթարթ միայն—կարճ ու զօրաւոր,
 Ակնթարթ միայն —հմայիչ ու գոռ
 Յառաջ է քաշում բիւրաւոր ամբոխ
 Եւ մի ակնթարթ մարտին արիտուր
 Կուռղ ժողովուրդ տալիս է ընդմիշտ:
 Ձիգ տարիների ծանր լուծ ու վիշտ:

Այն ինչ պատրանք էր դեռ մի ժամանակ,
 Այն ինչ գուշակել կարող էր հանձար
 Լոկ ապագայում մէզ—մշուշափակ,
 Այն ինչ սրտերին հուր էր բաշխում վառ,
 Իրեն էր ձգում անվերջ, յարաճուն
 Այնքան վեհ խոհեր, տենչոտ ու տոկուն,
 Ամենը, որ մունջ պահել է անշուք
 Մարդկային ցեղի զարգն ու ծաղիկ,
 Երկար տարիներ պարուրել գազտուկ,
 Ինչպէս շիրիմը խաղաղ ու լոկի,—
 Բացւում է հիմայ
 Սրտերում անաս
 Գոռոզ ամբոխի, որ գէնքը ձեռքին
 Վանել է ահը, փարել վրէժին:

Եւ արեան, սրի, բոցի խնջոյքում
 Անհոգ ցրցւել են դրօշներ ծփուն:
 Մարդիկ քայլում են արբած ու կարմիր,
 Քարերից էլ բիրտ և անսիրալիք,
 Մարդկանց զիերով քայլում են անհոգ,
 Ճեղքւած վէրքերին թոյն խոցում մորմոք...

Զօրքը վաստակած կարգ—հրամանից
 էլ չի տարբերում անմեղ, մեղաւոր,
 Նեղում է մարդկանց թոյլ ու ճանձրալից,
 Քշում է նրանց, որոնց հեռաւոր
 Յոյսը ձգում է թէ ձեզ վերջապէս
 Այ թագ կընկուսի յաղթական ու վէս:

Քանդել—կերտելու էլ լիակատար!
 Սպանել—նորոգ տեսնելու մի կեանք!
 Որպէս բնութիւն, յաւերժական մայր,
 Անկշտում քաղցել, ծարաւել անյագ,
 Գրկել նպատակ, ձգել ողջ հաշիւ,
 Ոյժ տալ, ճանաչել մի ձգտում, գրոհ.
 Յաղթել կամ ընկնել! Բերել ամեն գոհ,
 Որ յաւէտ շրջւի այս կեանքի անիւ:

Մուսյլ է կապել գորշ երկնակամար,
 Տուն, կամուրջ գրկել կրակը անյագ.
 Իսկ խորհրդաւոր մշուշը խաւար
 Նոցա մեկնում է սգի շրջանակ,
 Եւ ջրանցքները կայտառ ջրի մէջ
 Արասցօլում են ծուխ ու հրի վէճ:
 Ծիլ աշտարակներ շարքով աներեր
 Քաղաք են նետում վիթխարի ստուեր.
 Երկնակամարով ժամանակ առ ժամ
 Ոսկէ կայծերի ցրում է երամ,
 Եւ թեժ պողերը արնոտ ցոլքերով
 Երկին են ծառսում խերառ գրոհով:

Ուհ, հրագարկը! Նորէն ու դարձեալ...
 Մահը արձակել գիտէ անսխալ:
 Սովոր ձեռքերով շրջեց դէպ ամբօխ
 Հրացանների երախը սոսիս:
 Ահա հրաման—չոր, կոշտ ճարձատիւն,
 Եւ լաց ու շիւան, ձեռքերի մի սար,
 Մարդկային շարքեր պառկում են իսկոյն,
 Որպէս գերանդուց կանաչը դալար:

Մարտի ազմուկին յաջորդ ու տէր է
 Խորին լուսթիւն ճնշող, կապարէ,
 Ուր որ նայում ես զիակ ու զիակ,
 Անմիտ կծկւած, մերկ մարմիններով,
 Այն ինչ ջահերի դողդոջուն կրակ
 Յառաջ է սահում ֆանտաստիկ պարով
 Եւ ստուերների խաղով չարախինդ
 Նոցա դէմքերը ծոմսում անմիտ:
 Կուռ սրտի պէս բախում է դուժկան,
 Դողգող լալիս է, մերթ առնում դագար,
 Հուրը հասել է և գանգակատան,
 Սողում է անփոյթ դէպի հիմնաքար,
 Սև օղակներով ծայրից մինչև ծայր
 Նրան պարուրում, որպէս մի ուղաւ,
 Եւ լում է նա, գանգը ազգարար,
 Ինչպէս կսկիծը սև ու չարագաւ:


Եւ պարսաններում հին ու արքունի—
 Անհամբոյր, դաժան աղբաալի համար,

Հարուստի առջև հաճոյակատար—
 Եւ պալատներում, ուր մէշտ անթերի
 Ճնշուել է այնքան թոխչքը անկախ,
 Հիմայ գայրոյթը քայլում է անվախ:
 Մուտքը բացում է ամբոխը ջարդով,
 Գողում է փակածնք ծանր ձողի տակ,
 Պահարաններից թռչում է կարգով
 Ամեն արքունի գաղտնի սուրբ տախտակ —
 Համարած թղթեր, գրքերի մի շարք,
 Ուր հին օրէնքը և սին բարբաջանք
 Համերաշխօրէն
 Իրար գտել են...
 Նոցա լափում է ջահը հրաւառ,
 Չուում է անյետ անցեալը խաւար,
 Չքանում օղում,
 Ծիւի պէս հալւում:
 Այն ինչ ջարդում են մառան ու ամբար,
 Ճոխ պալատների պատշկամբներից
 Մարդկանց մարմիններ ճախրում են գէպ վար,
 Օղբ որսալով, լքւած, վշտահար...
 Ահա վեհաշուք սուրբ տաճարներում,
 Որտեղ իշխում էր երկիրը, պատկառանք,
 Սրբոց քանդակներ ջարդած անտրտում,
 Գոգզած զգեստ, շքեղ պաճուճանք:
 Բռունցք է հասել սրբոց գէմքերին,
 Եւ Քրիստոսը, կարծես ուրուական,
 Երկար, անարիւն, փարած էր խաչին,

Մի գամ է գտել իրեն պահարան,
 Որպէս մի անգոր
 Հէգ փայտի կտոր:
 Սրբապղծութիւն, տես, ամենուրեք.
 Անօթ, սրբութիւն ձգած կատաղի,
 Նշխարհը ցրած յատակով մէկ-մէկ
 Յանդուգն, ոտքով ճմլած ծաղրալի,
 Եւ սուրբ նշխարհներ յատակի վրայ
 Փայլում են որպէս ձիւնը ձմեռուայ...

Եւ համաստեղունք հայեացքները սառ
 Մեխել են դաշտին մարտի ու մահւան,
 Ուր որ փայլում է ու մարում նկար
 Վառ հրդէհների և սպանութեան:
 Եւ ողջ քաղաքը այլուում է բորբոք,
 Որպէս մի աշխարհ, ուր կախարգ, վհուկ
 Փռել են ոսկի,
 Շողեր ծիրանի:
 Եւ ողջ քաղաքը, որպէս վառ պսակ,
 Կարծես ծառսում է գէպ անյայտ վիճակ:
 Խենթութիւն, գայրոյթ տիրել են կեանքին
 Եւ եռում այնպէս ու ձայնում ուժգին,—
 Կարծես գեախնը դողում է անգոր,
 Եւ կարծես հուրը բազկով արնածոր
 Երկին ու կամար
 Պիտ քերէ իսպառ:
 Քանդել—կերտելու էլ լիակատար!

Սպանել—մի կեանք տեսնելու նորագ!
 Բանալ այն դուռը կամ շարդել անճար,
 Յողթել կամ ընկնել—մէկ չէ՞ դա արդեօք:
 Որքան էլ բախտը մուժ ապագայում
 Կարմիր կամ կանաչ գարուն խոստանայ,—
 Հանելուկներին մեր այս աշխարհում
 Մեզ մի բան միայն պարզ է աշկարայ.
 Չէ՞ ամենուրեք տեսնուում է այսանդ
 Մի ոյժ, խոր է, և յաւերժ ու քաջ,
 Որ ֆատալ, հապճեպ, հեխհե, անշեղ,
 Անծայր, անսահման թռչում է յառաջ!



* * *

(Սկիտալեց)

Մեր մարմիններով փռել ենք ուղին,
 Մեր արեամբ ծեփել կամուրջ ծեղ համար.
 Մենք լուռ քայլել ենք, դիմելով երկնին,
 Մի հեաք գծելով — շիրիմ, խաչաքար:—

Ստրուկ, շղթակապ, խոր խաւարի մէջ
 Մենք թափառել ենք զոռ երգի պապակ...
 Ընկան շատերը—և լոյս է անշէջ,
 Ու ջահէյներից գալիս է բանակ:

Գողում է չարը ձեր շարքից ստուար...
 Մօտ է մրրիկը, մարտը շանթերի...
 Հնչում է ձեր երգ յառանջ դէպ պայքար,
 Որպէս գուժկանը այրւող քաղաքի:

Դէհ, ազատութեան քայլէք երգերով,
 Չէ՞ մենք ընկել ենք հէնց դրա սիրոյն,
 Եւ ալդ երգերին խորունկ տենչերով
 Խոնաւ բանտերից ձգտել տոչորուն:



* * *

(Րօրերտ Բեօրնս)

Մթին գիշեր է, մռայլ ու խաւար,
Բայց գինետունը ուրախ ու պայծառ:
Արբածի համար գինու մի բաժակ
Ասող է, և լուսին, արև—արեգակ:
 Հաշիւ, տանտիկին,
 Համարը գինու,
 Տնւր հաշիւը հին
 Ու նորէն լցրնւ:
Էս կեանքը տօն է տէրերի համար,
Չքաւորներին — սով ու ցուրտ առատ,
Այստեղ բոլորի յարգը հաւասար.
Ամեն-մի արբած իր տէրը ազատ!
Սրբագան հեղուկ! Ես խեղդում եմ արգ
Նրա մէջ բախտս թշուառ, վշտալի,
Քամում մինչ յատակ, յատակը զուարթ,
Քամում ու խնդում... Է՛յ, նորէն գինի!
 Հաշիւ, տանտիկին,
 Համարը գինու,
 Տնւր հաշիւը հին
 Ու նորէն լցրնւ:



* * *

(Սկիտալեց)

Եռաց սրտումս արիւն...
Ճամբայ ելայ դէպ հեռուն,
Եւ ինձ Սէրն էր ուղեկից,
Մտերմութիւն, Խինդ, Թախիծ:
Ընկերները այն երեք
Թախիծին մնջիկ, քան սև մէգ,
Վանում էին շուտափոյթ,—
Բայց նա շարժեց իմ մէջ գութ...
Եւ քայլերով նա մոլոր,
Միշտ էլ հեռու, մենաւոր,
Իմ աղօսած ճանապարհ
Քարշ էր գալիս վշտահար...
Իսկ իմ երեք բարեկամ
Դարձել էին հաւ-սոխակ,
Բայց օրհասին տարաժամ
Ինձ ձգեցին խիստ արագ:
Դաւաճանեց անուշ Սէր,
Մտերմութիւնը կորաւ,
Սիրտս գրկեց հէնց գիշեր
Ու երբ արիւնս սառաւ,—
Խինդը մարեց այդ պահուն:
Ու ես քայլում եմ հեռուն
Ինձ բռնելով ուղեկից
Իմ անբաժան խոր Թախիծ:

Չ Ա Ն Գ Ը

(Սկիսուլեց)

Ես—պղնձածին մի կոչ ու մշինն,
 կեանքի անդունդից ժայթքած աշխարհ
 Եւ իմ ձայնը բիրտ, հաստատ ու հնչուն,
 Ես—ահագանգի մի ճիշ յեղաշար.
 Ծանր է լեզուս ու երկաթակուռ,
 Կուրծքս պղնձէ —կարծր ու ամուր:
 Եւ ձեր երգերին չէ կարող երբէք
 Չայնս միանալ՝ թունոտ ու բեկբեկ.
 Նա լոկ երգում է արնոտ անարգանք,
 Իսկ սիրաս կուռւմ վրէժ անյատակ:
 Կեդոսից եմ ելել, ապրել ճահճի մէջ,
 Ծանր երկունքով առել իմ հասակ,
 Եւ ստորացրել, ճնշել է անվերջ
 Ինձ մատաղ օրից սեասիրտ վիճակ:
 Օ՛, նա դարնել է ինձ միշտ անխնայ,
 Հոգիս խոցոտ է և արիւնլւայ...
 Եւ սիրտս, որակդ դեռ ոյժ կայ, թոթիւ,
 Էլ հիմա չունի բառեր սիրալիր!
 Ես դաժան բառեր ու մտքեր գիտեմ,
 Ես ողջ—բոցափառ մի կրակ անշէջ...
 Եւ վայրի երգը ու «անէծք դժխեմ»
 Կաղապարւել են բոլորը իմ մէջ!



* * *

(Սկիսուլեց)

Ես արդ պոկւած եմ դաշտից մայրենի,
 Մոռացւած երկրից իմ այն հեռաւոր.
 Հայրենի մարդկանց օտար եմ հիմի,
 Մերժւած նրանցից ու մեն-մենաւոր:
 Իսկ նրանց, ում հետ ձգել էր վիճակ,
 Երբէք չգառայ մերձաւոր, ընկեր.
 Անէծք կարգացի նրանց համարձակ,
 Ինձ վտարեցին նոքա կուշտ ու գեր:
 Ինքնագոն ճահճին չթեքի ճակատ,
 Հեռուն քայլեցի իմ վշտով խորունկ...
 Եւ ով մենակ է, ինձ պէս ապաբախտ,
 Նրան մեկնում եմ իմ հուժկու բազուկ!
 Հիւանդ էք ոգով, դիմեցէք ինձ մօտ,
 Եկէք, ում բախտը չէ շոյել երբէք,
 Օ՛, դիմէք դուք ինձ, ով քաջ է, քինոտ,
 Ով ապստամբ է, և խրոխտ, և սէզ!
 Ձեր կեանքը դժոխք, շղթակուռ, խաւար...
 Ձեզ կառաջնորդեմ դէպ ազատութիւն!
 Չկայ, իմացէք, մի այլ ճանապարհ,
 Եւ ոչ էլ մի վայր մեկնելու հեռուն!



* * *
(Սկիտալեց)

Զանգակ ու բոժոժ հնչում են արձակ,
 Պարզամտորէն մտմտում հեքիաթ...
 Եւ ձիւնակօրօլ թռչում է սայլակ,
 Դէմքիս էլ մաղւում ցօղ, փոշի արծաթ!
 Զուրկ է աստղերից մութ երկնակամար,
 Լոկ առկայծում են լոյսերը անբիծ,
 Անուշ ղօղանջը չէ առնում դադար,
 Ու սիրտս չունի հոգսեր ու թախիծ:
 Է՛հ, թռիւր հոգիս, ընդգրկի՛ր պատրանք,
 Հեռու խեղդեցէ՛ք դուք դէմքեր դալուկ.
 Բերում են աչեր ինձ հրապուրանք,
 Ճեղքելով թաւէ ու սև թերթերունք:
 Է՛յ, ուղի հարթէ՛ք, կը ճգմեմ, ճամբայ!
 Ուզում եմ ապրել անյագ, անսահման!
 Ոչ ոքի ուղին չեմ զիջի հիմա,
 Ես սիրել գիտեմ, ատել խիստ դաժան...
 Թևքում ծածկել է իր թաթը նազուկ...
 Հազիւ լաջողէ՛ր շոյել այդ բազուկ,
 Սակայն այս ձիւնից միտքս է պղտոր,
 Եւ բոժոժները կարգում են օրօր...
 Է՛յ, բարեկամներ, բոժոժ ու զանգակ,
 Միրոյ ղօղանջուն, սերտ դաշնակիցներ,
 Լոեցէ՛ք հիմա ժպտուն, խորամանկ,
 Սքօղէ՛ք իմ խոր, քնքոյշ գաղտնիքներ:

Մութը գրկել է մեզ թաւէ քօղով,
 Ծածկել են աստղեր, շողեր չեն ծորում,
 Իսկ բոժոժները՝ անընդհատ պարով
 Երգում են սէրս, անվերջ բլբլում:
 Եւ թող նենգ մարդիկ արդ ճանաչեն մեզ,
 Գուշակեն թովիչ խօսքերի մասին,
 Ճանաչեն զանգից, աչքից սիրակէզ
 Ու ճերմակ ձիւնից հալած այտերին:
 Է՛հ, բոժոժները ճախում են արբիչ,
 Պարզամտորէն մտմտում հեքիաթ...
 Փայլում են աչեր սիրուն ու թովիչ,
 Դէմքիս էլ մաղւում ցօղ, փոշի արծաթ...



* * *

(Իվան Բուկալիչնիկով)

Ով մեզ հետ է — թո՛ղ հիմա գայ,
 Եւ սեղմ ու կուռ շարքերով
 Մենք կընթանանք աներկբայ
 Ոսոխների գանգերով...
 Ով մեզ հետ է — թո՛ղ գայ հպարտ!
 Թո՛ղ չլինին սարուկներ!
 Մ'վքեր ենք մենք: Մենք շատ ենք, շատ, —
 Ազատութեան մարտիկներ:

Մեր տանջանքներին անյողդողդ թափով
 հիմա տրիտուր
 Մենք պահանջում ենք երջանիկ վիճակ, բախտ
 երանաւէտ,
 Հայրենի երկիր! Քո տարիները կորուսած իզուր,
 Քո տարիները, և ոյժ, և կորով բերում ենք
 քեզ յետ:

Ով մեզ հետ է — թո՛ղ գայ հպարտ!
 Մենք տենչում ենք կարելին,
 Հացէ տալիս մեզ մեր սապատ,
 Հողը կրծում մեր մարմին:
 Վօլգան գիտէ մեզ խեղճ բուռլա՛լ,
 Մթին այրեր — հանքափոր,
 Մուրճով սալին մենք շարունակ
 Հա՛ գարնում ենք քրանաթոր:

Գարշ ճորտութիւնը դարեր շարունակ ծը-
 ծել է մեր հիւթ,
 Գարշ ճորտութիւնը կեանքի զարկերից կընկնի
 ոտնահար.
 Յառաջ դէպի լսյս! Դարեր չեն սահել իզուր,
 անօգուտ.
 Նոքա ծնել են տարբեր գաւակներ, տարբեր
 գաղափար:

Ով մեզ հետ է — թո՛ղ գայ հպարտ!
 կեանքը կանչում է յառաջ!
 Հարագատը դէպ հարագատ
 Զէնք կըճօճէ շանթառազ...
 Եւ կը քաշէ թշնամին վատ
 Թո՛ղ անօթը մեր առաջ...

Յաւերժ յիշատակ սուրբ գործի համար ըն-
 կած գոհերին!
 Յաւերժ յիշատակ խոնաւ բանտերի նահատակ-
 ներին!
 Կենդանի խօսքի քարոզիչներին յաւերժ յի-
 շատակ!
 Յաւերժ յիշատակ! Ու անդուլ կոխ և վրէժ
 անյագ!





<< Ազգային գրադարան



NL0166105

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ԿԵԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻՅ

1. Մօղօլօգօզ.—Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմտքում. թարգմ. Կ. Միքայելեանի, գինը՝ 10 կ.
2. Բ. Իշխանեան.—Տնտեսական զարգացման ֆազերը գինը՝ 15 կ.
3. Կ. Կաուցկի.—Աւարիայի ճգնաժամը (Լեզու և ազգ) թարգմ. Ա. Ս. յաւելած՝ օտար խօսքերի բառաթերթ, գինը՝ 7 կ.
4. Գէյդէլ.—Նօրմալ բանւորական օր. թարգմ Մ. Եսայեանի, գինը՝ 5 կ.
5. Շտէրն.—Մարքսի յաւելեալ արժէքի թէօրիական թարգմ. Ս. Դ. գինը՝ 5 կ.
6. Վ. Լիբկնիխտ.—Երկու աշխարհ. թարգմ. Հ. Յով. գինը՝ 15 կ.
7. Կ. Այսնէր.—Յաղթական մայիսը. թարգման. Մ. Սարուխան. գինը՝ 2 կ.
8. Լումպեն-պրօլետարիատը և յեղափոխութիւնը. թարգմ. Ա. Ս. գինը՝ 5 կ.
9. Գ. Գլեխանով.—Ոյժ և բռնութիւն. թարգման. Յովակ.—Ս. գինը՝ 5 կ.
10. Բ. Իշխանեան.—Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, գինը՝ 40 կ.
11. Երգեր. թարգմ. Դաւիթ Սորեկի. գինը 15 կ.
Կ. Մարքս և ֆ. Լենգլս.—Կօմունիստական մանիֆեստը, գինը՝ 25 կ.

Գիւմէլ՝ գրալրատանոցներին: